

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԺՈՂՈՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԾՓՄԱՆ ՈՒ ՓՈԽՅԱՐՍԱՏԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Յ. Յ. ԱՐԱՆՍՆՅԱՆ

Հայաստան աշխարհը, գտնվելով արևելքն արևմուտքի հետ կապող առևտրական բանուկ ճանապարհների խաչուղիներում, սկսած դեռևս անհիշելի ժամանակներից, մշտապես ներառված է եղել համաշխարհային առևտրական հարաբերություններում: Իսկ XV դարից սկսած, երբ Թուրքիան Կ.Պոլսի գրավումով փակում է արևմուտքի հետ Փոքր Ասիայի, Սիրիայի և Հայաստանի վրայով դեպի Միջին Արևելք, Հնդկաստան ու Չինաստան անցնող ուղիները, արևելքի ու արևմուտքի միջև միջնորդ վաճառականների ի հայտ գալը դառնում է կենսական անհրաժեշտություն: XVII դարասկզբին ձևավորվում է հայ առևտրական դասը, որն էլ մինչ XVIII դարի կեսը դառնում է արևմուտքի հետ արևելյան մի շարք երկրների միջև առևտուրն ապահովող հիմնական օղակներից մեկը:

Այսպիսով, հայ վաճառականությունն աստիճանաբար սկսում է իր ուրույն տեղը գրավել համաշխարհային առևտրի պատմության մեջ: Այդ մասին է փաստում արդեն այն հանգամանքը, որ հայ վաճառականները շուտով արժանանում են համաշխարհային ճանաչման ու դրվատանքի: Ինչպես աշխարհահռչակ ճանապարհորդների, այնպես էլ XVII-XVIII դդ. եվրոպական գիտության ու մշակույթի ականավոր ներկայացուցիչներ Շ. Լ. Մոնտեսքյույի, Յ. Գ. Հերդերի, Ի. Կանտի և այլոց աշխատություններում մեր ժողովրդի վերաբերյալ ընդհանուր առմամբ արտահայտված են գովեստի ու գնահատանքի խոսքեր: Իսկ XX դարի ֆրանսիացի խոշոր պատմաբան Ֆ. Բրոդելն իր եռահատոր «Նյութական քաղաքակրթությունը, տնտեսությունն ու կապիտալիզմը, XV-XVIII դդ.» աշխատության երկրորդ հատորում ոչ միայն բազմիցս անդրադառնում է հայ վաճառականության ֆենոմենին, այլև մեկ առանձին ենթավերնագրով փորձում է ներկայացնել հայ վաճառականների դերն ու նշանակությունը համաշխարհային առևտրի համատեքստում: Այս իրողությունը մի կողմից կարելի է դիտել որպես հայ վաճառականության գործունեության գնահատման չափանիշ, իսկ մյուս կողմից էլ սա նշանակում է, որ հիմնականում նրանց շնորհիվ էր մեր ժողովրդի մասին այդ շրջանում ձևավորվել այդպիսի դրական պատկերացում:

Իսկ հայրենի երկրում հայ առևտրական դասը, ինչպես ամեն մի նորը, սկզբնական շրջանում մեծ դժվարությամբ է ընդունվում տիրող ֆեոդալական դասի կողմից: Սակայն ապրանքադրամային հարաբերությունների կայունացման, առևտրական դասի գործունեության ընդլայնման ու առևտրականության հասարակական դերի մեծացման արդյունքում XVII դարավերջին արդեն փոխվում է նաև այդ դասի վերաբերյալ հասարակական գնահատականը: Ավելին, նոր ձևավորված առևտրական դասը սկսում է «տոն ու ընթացք տալ հայ հասարակական-քաղաքական ու գիտամշակութային կյանքին»²: Հայ գիտական-փիլիսոփայական մտքի

¹ Տե՛ս Փ. Բրոդել, *Մատերիալնայա ցիվիլիզացիա, էկոնոմիկա և կապիտալիզմ, XV-XVIIIա.*, տ. 2, փր. ս ֆրանцузского Ю. Н. Афанасьева, М., 2006, էջ 141-146:

² Հր. Ղ. Միրզոյան, *Հովհաննես Միրզոյանի Ջողաթեցի*, Եր., 2001, էջ 16:

երախտավորներից շատերը՝ ի դեմս Հովհ. Անկյուրացու, Ոսկան Երևանցու, Մատթեոս ու Ղուկաս Վանանդեցիների, Կոստանդ Ջուղայեցու և այլոց, ոչ միայն գովաբանում, այլև փորձում են ամեն կերպ սատարել առևտրական դասին՝ նրանց հաղորդակից դարձնելով եվրոպական գիտության նորագույն նվաճումներին մաթեմատիկայի, աշխարհագրության, հաշվապահության բնագավառներում, ինչպես նաև ծանոթացնել աշխարհի տարբեր երկրներում գործառնող չափ ու կշռի համակարգերի, կիրառվող դրամական միավորների հետ: Եվ որպեսզի առավել արդյունավետ լինե՞ր հայ առևտրական դասին համապատասխան գիտելիքներով զինելու գործընթացը, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքին կից Խաչատուր Կեսարացու ջանքերով հիմնվում է դպրոց, որտեղ առաջնահերթ ուշադրություն էր դարձվում աշակերտներին առևտրական կյանքի վերաբերյալ զանազան գիտելիքներ տալու հանգամանքին: Իսկ նույն դպրոցի ականավոր ուսուցիչ Կոստանդ Ջուղայեցին 1685թ. կազմում է մի ժողովածու-դասագիրք՝ «Աշխարհաժողով» վերնագրով, ուր փորձում է հնարավորինս մանրամասնորեն ներկայացնել տարբեր երկրներում գործածվող չափ ու կշռի, դրամական միավորների, ներմուծվող ու արտահանվող ապրանքատեսակների, հարկերի, վարկերի ու մաքսերի վերաբերյալ տեղեկատվություն՝ այդ ընթացքում նաև կատարելով անչափ հետաքրքրական դիտողություններ ժողովուրդների կենսամակարդակների տարբերությունների վերաբերյալ: Այս երկը հետագայում հիմք է դառնում Ղուկաս Վանանդեցու հեղիանակած նմանատիպ մեկ այլ աշխատության՝ «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի», որի ստեղծման հիմնական դրդապատճառը, ինչպես գրում է հեղինակը, «ի յօգուտ մերագնեայ վաճառասէր եղբարց»¹ որևէ գործ անելն էր:

Իրավամբ, որպեսզի հայ վաճառականը կարողանար հաջողությամբ վարել իր առևտրական գործերը, որևէ երկիր այցելելուց առաջ պետք է ստույգ իմանար տվյալ երկրի չափ ու կշռի և դրամական միավորները, լեզուն: Ավելին, նա պետք է բավականաչափ գիտելիքներ ունենար նաև այդ երկրում բնակվող ժողովրդի կենցաղի առանձնահատկությունների, բարքերի ու սովորույթների մասին: Երբեմն էլ հայ առևտրական դասն իր աշխարհասփյուռ գործունեության ընթացքում կարող էր փոփոխել նաև մարդկանց վարք ու բարքը, կենցաղն առհասարակ: Բանն այն է, որ բազմաբնույթ ապրանքների առուծախյին զուգահեռ հայ վաճառականն անգամ մարդկանց կենցաղի ու սովորույթների մակարդակում կարող էր այնպիսի փոփոխություններ մտցնել, որոնք կարող էին շլջադարձային նշանակություն ունենալ ժողովուրդների զարգացման ճանապարհին: Փաստորեն տնտեսական, նյութական բարիքների շարժի իրականացմանը համընթաց՝ ոչ պակաս, գուցե և առավել մեծ կարևորություն են ստանում այդ գործընթացների մշակութային ու բարոյահոգեբանական հետևանքները:

Եվ քանզի գյոբալիզացիայի մեր դարաշրջանում առավել կարևորվում են մշակութային ինքնության պահպանման և երկխոսությունների ապահովման գործընթացները, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն ժամանակ էլ ժողովուրդներն անտեղյակ չեն եղել միմյանցից, բավականաչափ ծանոթ են եղել միմյանց ինչպես մշակույթներին, այնպես էլ սովորույթներին, բարքերին ու արժեքային համակարգերին: Այսինքն՝ ժողովուրդների երկխոսության ապահովման պատմությունն էլ ունեցել է իր նախապատմությունը, ուր իր ուրույն տեղն ու դերն է ունեցել նաև հայ վաճառականությունը:

¹ Ղուկաս Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, էջ 3:

Եթե հայ վաճառականների գործունեությունը տնտեսական տեսանկյունից բավականաչափ ուսումնասիրված է, ուսումնասիրություններ են կատարվել նաև մշակույթների փոխհարստացման գործընթացում նրանց ունեցած դերակատարության առումով, ապա ժողովուրդների սովորույթների համակարգում, նրանց վարք ու բայքում ունեցած նպաստի տեսանկյունից հայ վաճառականության գործունեությունը դեռևս մանրակրկիտ ուսումնասիրության կարիք ունի: Ասվածից բնավ չի հետևում, թե այդ բնագավառում բացարձակապես ոչինչ արված չէ: Առևտրական դասի տնտեսական կամ մշակութային գործունեությունը վերլուծելիս ուսումնասիրողներն ակամայից անդրադարձել են նաև մարդկանց կենցաղում վաճառականների շնորհիվ կատարված մի շարք կարևորագույն փոփոխությունների: Չէ՞ որ ապրանքների փոխադրության լայնածավալ հոսքով միաժամանակ իրար էին միանում երկու հսկայական աշխարհներ, ոչ ավելի և ոչ պակաս՝ Արևելքն ու Արևմուտքը՝: Իսկ սա նշանակում է, որ արևելյան ու արևմտյան ժողովուրդները ծանոթանում էին հենց վաճառականության գործունեության շնորհիվ՝ փոխհարստացնելով ու փոխլրացնելով միմյանց մասին ունեցած պատկերացումները:

Հայ վաճառականների գործունեության, կյանքի տարբեր ոլորտներում նրանց ունեցած գործառույթների մասին տեղեկանում ենք գլխավորապես իրենց իսկ թողած բազմաբնույթ գրականության միջոցով: Դրանք օրագրություններ են, հաշվետու մարմեր, հրապարակախոսություններ, ինքնակենսագրական և այլ բնույթի երկեր, որոնցում վաճառականները հնարավորինս մանրամասնորեն ներկայացրել են իրենց ճանապարհորդությունների հետագիծը համայն աշխարհի գրեթե բոլոր կարևորագույն քաղաքներով: Իրենց օրագրություններում ու հաշվետու մարմերում նրանք գրանցել են ինչպես կատարված գործարքների մանրամասներ, այնպես էլ աշխարհի ժողովուրդների վարք ու քարքին առնչվող անչափ հետաքրքրական տեղեկություններ:

Հիմք ընդունելով երկու հայ վաճառականների՝ տարբեր ժամրերի երկեր՝ Հովհաննես Թովմաճյանի «Ինքնակենսագրությունը» և Տեր-Դավթի որչի Հովհաննեսի «Հաշվետու մարք», փորձենք ցույց տալ, թե ինչ նշանակություն և ինչպիսի ազդեցություն են ունեցել հատկապես այդ ժամանակի հայ վաճառականները ժողովուրդների շփման, բարքերի ու սովորույթների փոփոխության գործընթացում:

Հովհաննես Թովմաճյանը մեկն էր գրական ձիրքով օժտված հազարավոր վաճառականներից, ովքեր, դժնդակ ճակատագրի բերումով գրկված լինելով սիրելի գործով զբաղվելու հնարավորությունից, հարկադրաբար մտել էին առևտրի ասպարեզ: Նա ծնվել է Կոստանդնուպոլսում 1717թ., Մահտեսի Աբրահամի և Սրբուհի խաթունի ընտանիքում: 15 տարեկան հասակում ուսումնատենչ պատանին ընդունվում է Մխիթարյան միաբանություն: Ըստ կարճ ժամանակ անց հայրը ետ է կանչում նրան, քանզի իր ընտանիքի անդամներից ինը՝ Հովհաննեսի քույրերն ու եղբայրները, դարձել էին ժանտախտի համաճարակի զոհ: Որդեկորույս ծնողներին կարող էր սփոփել միայն ողջ մնացած միակ զավակի՝ Հովհաննեսի ներկայությունը: Ուստի հոր խնդրանքով նա վերադառնում է ծննդավայր: Կրթություն ստանալու երազանքն իրականություն դարձնելու փափագը սրտում՝ մեկ տարի անց նա կրկին վերադառնում է Վենետիկ և մտնում ս. Ղազար: Ուսումնառության հաջորդ տարում՝ 1734թ., ձեռնադրվում է սարկավազ և, ինչպես կարգն է, Հարություն աշխարհիկ անվան փոխարեն ստանում Հովհաննես հոգևոր անունը: 1738թ., երբ ստանում է հոր մահվան լուրը, կրկին ուղևորվում է Կ.Պոլիս: Որոշ ժամանակ անց վերադառնում է՝

՝ Տե՛ս Փ. Бродель, նշվ. աշխ., էջ 144:

կրթությունը շարունակելու, բայց Մխիթար աբբահայրը հրաժարվում է սիրելի աշակերտին ետ ընդունել: Բանն այն էր, որ այդ ընթացքում աբբահորը բազմաթիվ կասկածելի ու աննպաստ լուրեր էին հաղորդել Հովհաննեսի մասին: Հուսահատված թովմաճյանը «Հում երթալով կը ստանայ ս. Աթոռն իր ուխտերուն լուծումը և կը դառնայ Պոլիս, ուր կը կարգուի և վաճառականութեան կը հետեւի»⁵. Ինչն էլ հնարավորություն է տալիս նրան շրջագայել համայն աշխարհով և ծանոթանալ ժամանակի հայտնի մի շարք քաղաքական առաջնորդների ու հոգևոր հայրերի հետ:

Շուրջ քառասունյոթ տարի վաճառականի աստանդական ու դժվարին կյանքի թոհուրոհում անցկացնելուց հետո անգամ թովմաճյանը չի դադարում երազել Մխիթարյան միաբանություն վերադառնալու մասին: 1785թ., երբ այլևս ի վիճակի չէր առևտրով զբաղվել, կրկին խնդրում է Ստեփանոս Երկրորդ աբբա Մելքոնյանին իրեն Միաբանություն ընդունել: Աբբահայրն ի կատար է ածում թովմաճյանի խընդրանքը: Այնուհետ թովմաճյանն սկսում է այնպիսի հետաքրքրությամբ ներկայացնել իր ճանապարհորդությունների ընթացքում կուտակած հարուստ կենսափորձն ու ի ցույց դնել այդ ընթացքում ձեռք բերած գիտելիքների կարևորությունը հատկապես ժողովուրդների բարքերի ու սովորույթների վերաբերյալ, որ գրավում է անգամ աբբահոր ուշադրությունը: Վերջինս, տեսնելով թովմաճյանի հարուստ կենսափորձն ու պատմելու հիանալի ծիրքը, պատվիրում է կազմել ինքնակենսագրական աշխատություն, որը կպարունակեր իր կյանքին առնչվող բոլոր անցքերն ու մանրամասները: 74-ամյա թովմաճյանը 1790թ.⁶ օր ծերության, ստանձնում է այդ դժվարին, բայց և իր համար անչափ հաճելի աշխատանքը: Մխիթարյան միաբանության ամենաուշագրավ ներկայացուցիչներից մեկի՝ Հովհաննես թովմաճյանի աշխատությունը բաղկացած է 527 էջից, որից առայժմ, ցավոք, պատահիկներ են տպագրվել: Սակայն անգամ փոքրածավալ այդ նյութերն իրենց ընթերցողին լուրջ մտորումների ու վերլուծությունների առիթ են տալիս:

Եթե Հովհաննես թովմաճյանն առևտրական ճանապարհորդությունները սկսում է Կ. Պոլսից, ապա Տեր-Գավթի որդի Հովհաննեսի համար այդպիսի ելակետ է դառնում հայրենի Նոր Զուղան: Առևտրական համաձայնագիր կնքելով Նոր Զուղայի երկու մեծահարուստ վաճառականների հետ՝ նրանց ապրանքը վաճառելու նպատակով Հովհաննեսը մեկնում է Հնդկաստան: Ավելի քան 11 տարիների ընթացքում՝ 1682-1693թթ., նա լինում է Հնդկաստանի, Նեպալի և Տիբեթի բազմաթիվ քաղաքներում: Եվ քանի որ մեկնել էր որպես գործակատար, ապա վերադառնալիս, ինչպես կարգն էր, պետք է կարողանար ճշգրիտ հաշվետվություն ներկայացնել իր «աղաներին»: Ուստի մեկնելու օրից ի վեր Հովհաննեսն իր «Հաշվետումարում» ամենայն մանրամասնությամբ արձանագրում է առևտրական բոլոր գործարքներն ու կատարած ծախսերը: Իր կատարած գործարքների մանրամասներից բացի՝ «Հաշվետումարում» տեղ են գտել նաև ինչպես տարբեր երկրների տնտեսական կացությանը, չափ ու կշռի միավորներին առնչվող կարևորագույն մանրամասներ, այնպես էլ այդ երկրների մշակույթների, կենցաղի ու բարքերի վերաբերյալ անչափ հետաքրքրական նյութեր, որոնք, դարեր շարունակ լինելով ձեռագիր ու դժվարընթեռնելի, ըստ էության մնացել են չուսումնասիրված ու չգնահատված: «Հաշվետումարի» բնագիր տարբերակն այժմ գտնվում է Լիսաբոնում՝ Պորտուգալիայի ազգային մատենադարանի ձեռագրական բաժնում, որի հակիրճ քարզմանությունը հրատարակվել է 1967թ.⁶: Իսկ մինչ այդ՝ 1961թ., Պորտուգալիայի գիտությունների ակադեմիայի

⁵ «Հ. Յովհաննես թովմաճյանի ուղևորութիւնն Յեթովպիա». «Բազմավեպ», 1937, թիւ 6-9, էջ 138:

⁶ Տե՛ս Փ. Бродель, նշվ. աշխ., էջ 92:

թղթակից անդամներից հայազգի մեկի ջանքերով «Հաշվետումարի» մանրաժապավենը տրամադրվում է Մաշտոցի անվ. Մատենադարանին: 1984թ. Լ. Խաչիկյանի և Հ. Փափագյանի աշխատասիրությամբ Տեր-Դավթի որդի Հովհաննեսի «Հաշվետումարը» տպագրվում է Հայաստանում:

Այսպիսով, Հովհ. Թովմաճյանի ինքնակենսագրական երկից մեզ հասած անչափ հետաքրքրական պատառիկների և Հովհաննես Ջուղայեցու «Հաշվետումարի» համեմատական վերլուծությունից փորձենք առանձնացնել ժողովուրդների շփման ու բարքերի փոփոխության գործընթացում հայ վաճառականների ունեցած խառնոց դերակատարության որոշ դրսևորումներ:

Աշխարհի տարբեր պետություններ ու ժողովուրդներ XVII-XVIII դդ. միմյանց քաղաքական, դիվանագիտական, տնտեսական ու մշակութային կացության մասին տեղեկանում էին բանբերների և գլխավորապես երկրից երկիր շրջող վաճառականների միջոցով: Չէ՞ որ հենց առևտրական ճանապարհորդությունների ժամանակ էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ հանդիպում միմյանց, բարեկամանում, ծանոթանում միմյանց մշակութային համակարգերի առանձնահատկություններին, վարք ու բարքին, կենսակերպին առհասարակ: Այս իմաստով մեծ էր հայ վաճառականության դերակատարությունը հատկապես արևմուտքի երկրներին արևելյան մի շարք երկրներ ներկայացնելու տեսանկյունից: Օրինակ, XVII-XVIII դարերում հատկապես մեծ էր հետաքրքրությունը Հաբեշտանի նկատմամբ, իսկ այստեղ այցելելու իրավունք ունեին սպիտակամորթ ժողովուրդներից միայն հայերը և հույները: Պատճառն այն էր, որ XVII դարում լատին միսիոներների ծավալած գործունեության հետևանքով Հաբեշտանում կրոնական մեծ ալեկոծություններ էին առաջացել, որից հետո եվրոպացիների առջև փակվել էին այդ երկրի սահմանները: Փաստորեն եվրոպացիները կա՛մ պետք է հայկական ու հունական տարագներով այցելեին Եթովպիա, կա՛մ էլ այդ աշխարհի հետ կարող էին «հաղորդակցվել» հայ և հույն վաճառականների միջոցով: Եթովպիա այցելած հայ վաճառականներից էր նաև Հովհ. Թովմաճյանը, որն այնտեղ հայտնվելուց կարճ ժամանակ անց, շնորհիվ իր գիտելիքների ու հմտությունների, մեծ հեղինակություն է ձեռք բերում: Բանն այն է, որ Հաբեշտանում գրագետ համարվող պալատականներն անգամ դեռևս չէին տիրապետում տարրական մի շարք կարևորագույն հմտությունների ու գիտելիքների: Օրինակ, տեղի պալատականներին նա ցույց է տալիս, որ «գոեհկական և տաժանելի կերպի»⁷ բակլաներով պարզունակ թվարկումով հաշվարկներ անելու փոխարեն կարելի է հաշվել թվագրերով, ինչն առավել դյուրին է ու արժանահավատ: Իսկ երբ բացահայտում է նախորդ գանձապետի, որը ևս ազգությամբ հայ էր⁸, թույլ տված խաբեությունները, Իթեկե թագուհին հրամայում է ձերբակալել նրան և 1764 թ. Թովմաճյանին նշանակում է պալատական գանձապետ ու հաշվապահ: Գիտակցելով ու գնահատելով հայ վաճառականի գիտելիքների կարևորությունը՝ թագուհին առաջարկում է նրան որոշակի վարձավճարով մի քանի պալատականների փոխանցել իր հաշվապահական գիտելիքները: Այս մեկ փաստն անգամ բավարար է եզրակացնելու, թե ինչպես կարող էին վաճառականների շնորհիվ տարբեր երկրներ ծանոթանալ միմյանց ձեռքբերումներին: Չէ՞ որ հաշվապահական գիտելիքներով զինված Թովմաճյանն ակամայից դառնում է գիտելիքներ տարածող: Այստեղ խոսքը տեսական հաշվապահական գիտելիքների մասին չէ, այլ առօրյա, կիրառական գիտելիքների փոխանցման, ինչը ևս պակաս կարևորություն չունի:

⁷ «Հ. Յովհաննես Թովմաճյանի ուղևորութիւնն Եթովպիա», էջ 150:

⁸ Տե՛ս Դ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 471:

Եթովպիայից հետո աստանդական հայ վաճառականը, շրջելով «գերիս մասն աշխարհիս՝ յերուսիլա, յԱսիա, և յԱփրիկե՝ գերեսուն ինքնիշխան պետութիւնս և զքազաւոյութիւնս»⁹, առևտրական հերթական ճանապարհորդության կանգառ է դարձնում Ֆրանսիան: Թովմաճյանի հայազգի օգնական Աստվածատուրը, որն ապրում էր Փարիզում և կանխավ զիտեր արքունիքի՝ Հաբեշտանի նկատմամբ տածած մեծ հետաքրքրության մասին, համոզում է Թովմաճյանին շեղվել իր նախատեսած առևտրական ուղուց և հանդիպում է կազմակերպում Ֆրանսիայի նախարարներից մեկի հետ: Սա ըստ էության Թովմաճյանի համար դառնում է ճակատագրական, քանզի նրա գրույցներն այնքան են հետաքրքրում այդ պաշտոնյային, որ վերջինիս ջանքերով կազմակերպվում է Թովմաճյանի հանդիպումը նաև Ֆրանսիայի կայսեր՝ Լյուդովիկոս 15-րդ հետ: Լինելով ֆրանսիական արքունիքում սպասված ու ցանկալի հյուր՝ Եթովպիայի վերաբերյալ նրա ներկայացրած ցանկացած մանրամասն մեծ ուշադրության է արժանանում: Այդ են փաստում ֆրանսիացի պաշտոնյայի և Լյուդովիկոս 15-րդի հետ վարած երկարատև գրույցները «զբաղաբան եւ զպատմութիւնն Հապէշին»¹⁰, այնտեղի վարք ու բարքի, սովորույթների, արքունական համակարգի և այլնի վերաբերյալ: Տարիներ շարունակ Թովմաճյանն ապրել էր այդ կենցաղով ու միապետին հուզող հարցերին ավելի լավ ոչ ոք պատասխանել չէր կարող: Ուստի Թովմաճյանն սկսում է պատմել Հաբեշտանի ժողովրդի վարք ու բարքի, նիստ ու կացի մասին՝ միաժամանակ համեմատելով սեփական ազգի ու թուրքական իրականության մեջ ընդունված ավանդույթների հետ: Լյուդովիկոսը համակ ուշադրությամբ լսում է նաև հայ վաճառականի պատմությունները եթովպական ժողովրդի՝ սեղանից օգտվելու կանոնների վերաբերյալ: Ըստ այդ կանոնների՝ ազնվականները պետք է ուտեին սպասավորների ձեռքից: Սա այնքան հետաքրքիր ու զվարճալի է թվում Ֆրանսիայի միապետին, որ նա անգամ հրամայում է իր պալատականներից մեկին ուտել Թովմաճյանի ձեռքից: Փաստորեն Ֆրանսիայի միապետին հետաքրքրում էին ոչ այնքան Եթովպիայի տնտեսական կամ քաղաքական ոլորտներին վերաբերող մանրամասներ, որքան այնտեղի նիստ ու կացին, վարք ու բարքին առնչվող հարցեր: Սա ինքնին խոսում է ժամանակի մշակութային հետաքրքրությունների մասին:

Այսպիսով, եթե Եթովպիայում Թովմաճյանը մեծ ընդունելության էր արժանացրել իբրև քաղաքակիրթ ու գրագետ վաճառական, որից տեղացիները պիտի սովորեին, օրինակ, հաշվապահության նոր մեթոդներ ու սկզբունքներ, ինչպես նաև իրենց կենցաղին առնչվող մի շարք կարևոր իրողություններ, ապա ֆրանսիական արքունիքում ընդունելության ժամանակ նա ներկայացնում է մի շարք հետաքրքրական տեղեկություններ Աֆրիկա աշխարհամասի մասին, ուր եվրոպացիների մուտքն արգելված էր: Ավելին, անգամ ֆրանսիական արքունիքում Թովմաճյանի գրույցներն անհետևանք չեն մնում: Այստեղ պալատականներից մեկը հարցնում է մեր վաճառականին, թե ովքե՞ր են այդ հայերը և նոր են արդյո՞ք պատմության թատերաբեմ իջել, թե՞ վաղուց գոյություն ունեին: Սա անչափ վիրավորում է Թովմաճյանի ազգային արժանապատվությունը, և նա զայրացած հարցնում է, թե արդյոք այդ «գիտուն բրինչպեյր»¹¹ կարդացե՞լ է Աստվածաշունչ և եթե կարդացել է, գիտի՞ արդյոք, թե ուրտեղ է գտնվում Նոյյան տապանը: Ստանալով բացասական պատասխան՝ Թովմաճյանը ներկայացնում է ջրիեղեղից փրկված Տապանի և

⁹ «Հ. Յովհաննես Թովմաճյանի ուղևորութիւնն Յեթովպիա», էջ 138:

¹⁰ Նույն տեղում, էջ 47:

¹¹ «Ուղեգրութիւն Հ. Յովհաննես Թովմաճյանի ի վերսայր», «Բազմավեպ», 1941, թիւ 1-12, էջ 50:

հայոց հողում հանգրվանելու Աստվածաշնչյան պատմությունը՝ այս շրջանին էլ իրավամբ վերագրելով հայոց ազգի ծագումը:

Տեսնելով իր պալատականի անգրագիտությունը և քաջ գիտակցելով գլխելիքներ ունենալու կարևորությունը՝ Ֆրանսիայի միապետը հրամայում է նրան գնալ ու Աստվածաշունչ ուսումնասիրել: Գիշտ է, Թովմաճյանը գիտության նորագույն խոսք չէր հնչեցնում Ֆրանսիայի արքունիքում, սակայն նրա հետ զրույցներն անհետևանք չեն մնում. արյույունքը լինում է այն, որ ևս մեկ անգամ կարևորվում է աշխարհի տարբեր երկրների՝ միմյանց մասին տեղեկացված լինելու հանգամանքը:

Աշխարհի տարբեր երկրների՝ միմյանց ծանոթացնելու տեսանկյունից հետաքրքիր գրառումների կան մահ Տեր-Դավթի որդի Հովհաննեսի «Հաշվետումարում»: Հատկապես ուշագրավ են Հովհաննես Ջուղայեցու Տիբեթյան գրառումները, որոնք «իրենց հնությանը և, մանավանդ, հարուստ բովանդակությամբ հասուկ տեղ են գրավում աշխարհի տանիքը համարվող այդ երկրի մասին օտարազգի այցելուների ուղեգրությունների շարքում»¹²: Բանն այն է, որ XVII դարում Տիբեթը փակ էր աշխարհի համար այն իմաստով, որ շատ քչերին է հաջողվել ներթափանցել այդ յուրօրինակ աշխարհը: Հայ վաճառական Հովհաննեսը թվով չորրորդ այլազգի հեղինակն է, որը գրավոր հիշատակություն է թողել այդ երկրում լինելու մասին: Այս հանգամանքն, անշուշտ, ավելի է մեծացնում հայ առևտրականի «Հաշվետումարի» արժեքը: Մյուս կողմից էլ սա նշանակում է, որ Տիբեթում շատ քիչ ու աղքատիկ էին արտաքին աշխարհի վերաբերյալ պատկերացումները: Հինգ տարի անընդմեջ ապրելով Տիբեթի սրտում՝ Լիսաս մայրաքաղաքում, Հովհաննեսը հասցրել էր յուրացնել այդ յուրօրինակ աշխարհի ինչպես տնտեսական, քաղաքական ու իրավական օրենքներն ու օրինաչափությունները, այնպես էլ տեղի լեզուն, սովորույթներն ու բարքերն առհասարակ: Ավելին, մինչ իր առևտրական ճանապարհորդությունը սկսելը Տեր-Դավթի որդի Հովհաննեսն ամենայն հավանականությամբ ուսանել էր Կոստանդ Ջուղայեցու գլխավորած առևտրական դպրոցում¹³, քանի որ նա կարողանում էր ոչ միայն զանազանել տարբեր երկրների դրամական միավորները, այլև հեշտությամբ լուծել դրանց հարաբերակցության, գործարքների, վարկերի ու մաքսային համակարգի հետ կապված բարդ ու խճուղված ամենատարբեր խնդիրներ: Նման գիտելիքներ նա կարող էր յուրացնել միայն տեսական որոշակի դասընթացների միջոցով, և առանց որոնց անհնարին կլինեք այդ բնագավառում որևէ հաջողության հասնել: Սա նշանակում է, որ աշխարհ տեսած ու գրագետ վաճառականից Լիսասյում, ինչպես Թովմաճյանից Եթովպիայում, շատ բան են տեղեկացել ու սովորել ինչպես նրա հետ գործարքներ կատարող առևտրականները, այնպես էլ տեղի իշխանությունները, վերնախավն ու ժողովուրդն առհասարակ:

Այսպես, եթե Թովմաճյանի շնորհիվ Հաբեշտանում մարդիկ հաղորդակից են դառնում գիտության նոր խոսքին, ապա Նեպալում Տեր-Դավթի որդու շնորհիվ հասանելի են դառնում գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները: Հովհաննես Ջուղայեցուց վճարվելիք մաքսատուրքից որոշակի գումարի փոխարեն, օրինակ, Քաթմանդուի պետական պաշտոնյան վերցնում է հայ վաճառականի անգլիական հեռադիտակը: «Իմ մին ինկլիզի դուրբին ունի, ըռաջէն վեռեց»¹⁴, - գրում է մեր առևտրականը: Ռաջայի կողմից մման վերաբերմունքը փաստում է այն մասին, որ հեռադիտակն այդտեղ դեռևս լայնորեն հայտնի չէր և ամեն մեկին հասանելի չէր: Ավելին, «թերևս դա երկրորդ հեռադիտակն էր, որ հասել էր

¹² «Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը», աշխ. Լ. Խաչիկյանի և Հ. Փափազյանի, Եր., 1984, էջ 24:

¹³ Տես նույն տեղը, էջ 13:

¹⁴ Նույն տեղում, էջ 136:

հեռավոր այդ երկիրը և դարձել տեղական իշխանավորի սեփականություն»¹⁵:

Հայ վաճառականությունը իր իսկ առևտրական գործերը հաջողությամբ վաճառելու համար յուրաքանչյուր երկիր այցելելիս մնացյալ անհրաժեշտ գիտելիքների հետ մեկտեղ կանխավ պիտի իմանար նաև այդ երկրի մշակութային հետաքրքրությունների ու կենցաղի մասին:

Նախապես տեղեկանալով այս կամ երկրի կենցաղի առանձնահատկությունների ու սովորույթների մասին՝ հայ վաճառականները կարողանում էին առևտրական ճանապարհորդության մեկնելիս այնպիսի ապրանքներ տանել, որոնք առավելագույն շահույթ կապահովեին: Օրինակ, Ջուդայի և Հնդկաստանի միջև գոյություն ունեւր բանուկ առևտրական ուղի, ուստի Տեր-Դավթի որդին Հնդկաստան, այնտեղից էլ Տիրեթ ուղևորվելուց առաջ հավանաբար քաջատեղյակ է եղել, որ այդտեղի բնակչության տարագի բաղկացուցիչ մասն էին կազմում տրանվա կոչվող համրիչները՝ թագրեհները, որոնք մարդիկ սովորություն ունեին իրենց դաստակներին ու պարանոցներին կրելու: Այդ պատճառով էլ մեծաքանակ սաթի հետ մեկտեղ, Հովհաննես Ջուդայեցին այդ երկիր է տեղափոխում նաև զարդարանքի այդ պարագաներից, որոնք հաջողությամբ իրացնում է: Նույնպիսի հաջողությամբ էլ Հովհաննես Թովմաճյանն է Հնդկաստանում վաճառում իր հետ տարած ակնեղենը: Իսկ ահա Աֆրիկայում որոշ իմաստով ձայնողվում են Թովմաճյանի առևտրային առանձին գործարքներ, որովհետև ըստ էության նա պատահաբար էր հայտնվել Հաբեշտանում և Հնդկաստանից մեկնելու առաջարկն ընդունելիս հավատացել էր իր ակնեղենից մեծ եկամուտներ ստանալու վերաբերյալ խոստումներին: Սակայն հայ վաճառականի առաջարկած զարդարանքի թանկագին պարագաները հատկապես սկզբնական շրջանում ոչ միայն չեն հետաքրքրում տեղացիներին, այլև ծաղրանքի առարկա են դառնում: Ավելին, եթովպացիները նույնիսկ կասկածում են այդ ակնեղենի իսկությանը՝ համարելով այն «սալիտակ մարդկանց հերթական խորամանկություն»¹⁶: Այսպիսի վերաբերմունքը մի կողմից արտացոլում է աֆրիկյան երկրներում եվրոպացիների հանդեպ ունեցած անվստահությունը, իսկ մյուս կողմից այն իրողությունը, որ XVII-XVIII դարերում հատկապես եվրոպական երկրներում տարածված պլյասսիությունն Աֆրիկայում դեռևս այնքան էլ տարածված չէր, ինչը վրիպել էր հայ վաճառականի ուշադրությունից: Ու թեև որոշ իմաստով խաբեության գոհ դարձած հայ վաճառականը էթովպիայում ակնեղենի վաճառքից առանձնապես մեծ շահ չի ստանում, այնուամենայնիվ կարողանում է հաջողությամբ դուրս գալ ստեղծված իրավիճակից՝ հատկապես հաշվապահական իր գիտելիքներն ու հմտությունները դարձնելով վաճառքի առարկա: Նմանապես և Ֆրանսիայում. շնորհիվ իր գիտելիքների արժանանում է ֆրանսիական միապետի ընդունելությանն ու համակրանքին:

Իրենց երկիրն այցելած հայազգի վաճառականներից բազմաբնույթ գիտելիքներ ստանալուց բացի՝ տեղացիները դեռևս շատ բան ունեին սովորելու նաև կենցաղային մի շարք կարևորագույն երևույթների վերաբերյալ:

Վաճառականության շնորհիվ տեղի էին ունենում երկխոսություններ ժողովուրդների նաև կենցաղի ու բարքերի, ծեսերի ու սովորույթների մասին, որոնց շնորհիվ երբեմն կատարվում էին էական փոփոխություններ:

Թովմաճյանի ինքնակենսագրական երկում տեղ են գտել ժողովուրդների կենցաղին, սովորույթներին առնչվող մի շարք այնպիսի գրառումներ, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու XVIII դարի

¹⁵ Նույն տեղում, էջ 23:

¹⁶ «Հ. Յովհաննես Թովմաճյանի ուղևորութունն Յեթովպիա», էջ 148:

Հաբեչստանի ժողովրդի կենսամակարդակի, տարազի, ավանդույթների ու սովորույթների մասին առհասարակ: Այսպես, տեղի կենցաղի առանձնահատկություններն ընդգծելու համար Թովմաճյանը տալիս է հաբեչների հանդերձանքի պարագաների մանրամասն շարադրանքը: Այս առումով հաբեչները Թովմաճյանի համար զարմանալիորեն տարբերվում էին հայերից և առավել ևս՝ եվրոպացիներից: Տեղեկացնում է, որ, ի զարմանս իրեն, այնտեղ՝ Հաբեչստանում, մարդիկ դեռևս առաջնորդվում են արեգակնային ժամացույցով, ծանոթ չեն օճառին և մի շարք տարրական կարևոր կենցաղային երևույթների: Ապա «Հ. Յովհաննէս Թովմաճանի ուղեորութիւնն Յեթովպիա» բաժնում բավականին հանգամանալից պատմում է մեղրագինու պատրաստման եղանակի, նրա քաղցրահամության և օգտակարության մասին: Հաբեչստանում այն օգտագործվում էր գինու փոխարեն, և աշխարհի երեսուն պետություններով ճանապարհորդած վաճառականի և իր ժամանակակիցների համար մի յուրօրինակ բացահայտում էր: Նույն բաժնում հեղինակը տեղեկացնում է նաև, որ եթովպացիների համար անհայտ էին նաև ավազից ոսկու առանձնացման և հալեցման եղանակները, որն ինքն առաջարկում է սովորեցնել, և որից տեղացիները հրաժարվում են, «բայց տխմար և աւաղ անմտութեան նոցա»¹⁷: Այնուհետ Թովմաճյանը պատմում է, որ այստեղ ընդունված էր միսն ուտել թարմ և հում վիճակում: Նա, բացատրելով այդ սովորույթի վնասակար հետևանքները, տեղացիներին սովորեցնում է միսն ուտել եփելուց հետո միայն: Սա մայրական կենցաղում մի կարևորագույն նորամուծություն էր: Չ՞ որ առաջին հայացքից գուցե և տարրական թվացող այս փաստն ըստ էության շատ մեծ նշանակություն ունի առողջ, հետևաբար նաև զարգացող հասարակություն ձևավորելու համար: Այդպիսի կարևորագույն նորամուծության համար, փաստորեն, Եթովպիան պարտական է հայ վաճառականին:

Տեղի ժողովուրդների կենցաղային սովորույթներից բացի՝ Հովհ. Թովմաճյանի ուշադրությունից չէին կարող վրիպել նաև ժողովուրդների հոգևոր կյանքին առնչվող մանրամասներ: Հոգևոր դաստիարակություն ու կրթություն ունեցող վաճառականին հատկապես զարմացնում ու զայրացնում է երեք տարեկան հասակում երեխաների լեզվի ծայրից կտրելու սովորույթն այն նպատակով, որ հետագայում մանուկը «բարոք խօսեսցի»: Թովմաճյանն այս սովորույթը որակում է որպես «յիմարութիւն մեծ ընդ ազիտութեան, որով ի զուր ցառով տանջեն զմանուկն»¹⁸ և փորձում է հնարավորինս համոզիչ փաստարկներ գտնել, որպեսզի ցույց տա դրա անհեթեթությունը: Եվ որքան էլ հզոր լիներ սովորույթի ուժը, և որքան էլ դժվարությամբ մարդիկ համաձայնեին հրաժարվել սովորույթներից, այնուամենայնիվ Թովմաճյանին հաջողվում է Եթովպիայում մարդկանց կենցաղում որոշ փոփոխություններ մտցնել:

Ի տարբերություն Հովհաննէս Թովմաճյանի, որի ինքնակենսագրական երկում գլխավորապես արծարծվում են մշակույթին, սովորույթներին ու բարքերին առնչվող հարցեր, Ջուդայեցի վաճառական Տեր-Գավթի որդի Հովհաննէսի «Հաշվետումարն» առհասարակ աչքի է ընկնում առևտրական ճանապարհորդությունների ընթացքում տեղի ունեցած գործարքների վերաբերյալ ստույգ տվյալներով: Այստեղ հեղինակը փորձում է հնարավորինս ճշգրտորեն արձանագրել ինչպես այս կամ այն երկրի չափ ու կշռի, դրամական միավորների առանձնահատկությունները, այնպես էլ վաճառված ապրանքների ու իր կատարած ծախսերի վերաբերյալ մանրամասներ: Եվ չնայած այս տեսանկյունից «Հաշվետումարի» բովանդակությունը բավականաչափ զիջում է Թովմաճյանի երկին, այնուամենայնիվ այստեղ ևս մի

¹⁷ Նույն տեղում, էջ 323:

¹⁸ Նույն տեղում, էջ, էջ 321:

շարք հետաքրքրական գրառումներ են կատարվել, որոնք վերաբերում են ժողովուրդների կենցաղին, սովորույթներին, նրանց կենսամակարդակների տարբերություններին առնչվող հարցերին: Անդրադառնա՞նք դրանցից երկուսին:

ա) «Հաշվետումարում» տեղ են գտել տարբեր պատճառներով ծագած վեճերի նկարագրություններ, որոնցից մեկը հատկապես ուշագրավ է մեզ հետաքրքրող հարցերի տեսանկյունից: Այսպես, 1690թ. ապրիլի վերջերին ինչ-ինչ պատճառներով վեճ է ծագում Հովհաննեսի և ումն վաճառական Ծատուրի միջև: Վեճը լուծելու համար նրանք դիմում են Տիբեթի արդարադատությունը մարմնավորող ներկայացուցչին՝ Ժուռին: Տիբեթյան դատական համակարգում կիրառվում էր զառ նետելու մեթոդը՝ որպես ճշմարիտը կեղծից զատելու չափանիշ: Այս մեթոդով լուծվում է նաև հայազգի վաճառականների վեճը, քանզի տեղի դատական մարմինը՝ Ժուռը, նրանց առաջարկում է զառ գցել¹⁹: Հաջողակ զառ նետելով՝ Ծատուրն իր օգտին է լուծում վեճը՝ ազատվելով փաստարկներ ու ապացույցներ ներկայացնելու «տաժանակիր» աշխատանքից: Որքան էլ որ հարցի լուծման այդպիսի եղանակը գոհացուցիչ չլիներ Հովհաննեսի համար, նա ստիպված ենթարկվում է այդ երկրի օրենքներին:

բ) Անշափ կարևոր ու հետաքրքրական է այն իրողությունը, որ հայ վաճառականներն ամենայն մանրամասնությամբ հաշվարկում և իրենց նոթատերերում նշում էին նաև օրական սննդին հատկացված գումարային ծախսերը: Իսկ տարբեր երկրներում կատարած մանաստիպ ծախսերի համեմատությունը մեզ հնարավորություն է ընձեռում որոշակի պատկերացում կազմել այն երկրների կենսամակարդակների վերաբերյալ, որտեղ լինում էին մեր վաճառականները: Այսպես, «Հաշվետումարի» հնդկաստանյան գրառումներից պարզվում է, որ Տեր-Դավթի որդին օրական ծախսել է 8.18 գ. արծաթ, իսկ տիբեթյան գրառումներից պարզվում է, որ Լհասայում նրա օրական ծախսը կազմել է 3.79 գ. արծաթ²⁰: Այս տվյալների համեմատությունից կարելի է եզրակացնել, որ Տիբեթում մարդկանց կենսամակարդակը ավելի քան երկու անգամ բարձր էր, քան Հնդկաստանում: Իսկ տարբեր կենսամակարդակներ ունեցող ժողովուրդներ ունեն տնտեսական ու քաղաքական, առավել ևս մշակութային տարբեր հետաքրքրություններ: Մի հանգամանք, ինչն անշափ կարևոր է նաև այսօր ժողովուրդների ու մշակույթների շփման ու հաղորդակցման տեսանկյունից:

Այսպիսով, XVII-XVIII դարերի հայ վաճառականության գործունեությունը չէր սահմանափակվում լոկ ապրանքաշրջանության իրականացմամբ: Որպես տարերային, օբյեկտիվ գործընթաց՝ հայ վաճառականի տնտեսական գործունեությունն ունենում էր իր մշակութային հետևանքները՝ միաժամանակ նպաստելով նաև աշխարհի տարբեր երկրների միջև կապերի հաստատման, միմյանց վերաբերյալ փոխադարձ ինֆորմացիայի ապահովման, գիտելիքների տարածման և վերջապես բարբերի ու սովորույթների փոփոխության և զարգացման գործընթացներին: Եվ չնայած ինքն այդպիսի դերակատարության չէր հավակնում, հատկապես մեծ է եղել հայ վաճառականության դերը ժողովուրդների շփման ու փոխհարստացման տեսանկյունից:

А. А. АГАХАНЫЯН — Роль армянского купечества в контактах и взаимобогащении народов. — В статье на основании двух памятников разного жанра, оставленных представителями армянского купечества, а именно “Автобиографии” Ованеса Товматчяна (конец XVIII в.) и “Дневника” Ованеса, Сына Тер-Давида (конец XVII в.), сделана попытка показать роль купечества в установлении и развитии связей между народами, в распространении, обрядов, обычаев, обмене информацией между странами.

¹⁹ Տե՛ս «Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը», էջ 230-232:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 36: